**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 2**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 06.02.2023թ. ԿՆՔՎԱԾ N ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2023/11-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **«13» ապրիլի 2023թ.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ն. Մելքումյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Սիմոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշման հավելված N 1-ի 56-րդ կետի 4-րդ ենթակետը և Կողմերի միջև 06.02.2023թ. կնքված N ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2023/11-1 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Կողմերը փոխադարձ համաձայնվեցին.

1.1 Պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգել մեկ անգամ 20 օրացուցային օրով՝ վերջնաժամկետ սահմանելով 03.05.2023թ.:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

## 3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>Ք. Երևան Վ.Սարգսյան 3/3<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011031953<br>ՀՎՀՀ 02565518<br>Գլխավոր քարտուղար<br>Ն. Մելքումյան<br>____________<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. | «ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ<br>ք. Երևան, Աճառյան 44<br>«Ինեկոբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 2050022020541000<br>ՀՎՀՀ 00429084<br>տնօրեն<br>Ս. Սիմոնյան<br>____________<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. |